

Երկրադինամիկական պրոցեսներ. Ե-ի կեղևի զանգվածներն անընդմեջ ենթարկվում են անդարձելի փոփոխությունների, որոնք միավորվում են երկրադինամիկական պրոցեսներ ընդհանուր անվան տակ և բաժանվում ներքին (էնդոգեն) և արտաքին (էքսոգեն) պրոցեսների: Առաջինները կապված են Ե-ի կծկման, գրավիտացիոն և մետալուրգիական դիֆերենցիացման, ռադիոգեն ջերմության և նյութի ֆազային փոփոխությունների հետ, իսկ երկրորդները՝ Արեգակի ջերմության, Լուսնի և Արեգակի հարուցած մակընթացային ուժերի, մետեորիտների հարվածների, քիմ. ռեակցիաների և օրգ. կյանքի գործունեության հետ: Երկրադինամիկական պրոցեսները դրսևորվում են լիթոսֆերայի բեկորների ուղղաձիգ և հորիզոնական դանդաղ տեղաշարժերի, երկրաշարժերի, կեղևի ծալքավորման, խրգման և այլ դիսլոկացիաների ձևով: Այդ պրոցեսների հետ են կապված նաև մագմատիկ երևույթները, ապարների վերաբյուրեղացումն ու միներալային կազմի փոփոխությունները, վերահալումը բարձր ճնշման, ջերմաստիճանի ու ֆլյուիդների ազդեցության պայմաններում (մետամորֆիզմ): Արևի ջերմության ազդեցությամբ շարժման մեջ են մտնում օդային զանգվածները, գոլորշիանում օվկիանոսների, ծովերի ու լճերի ջրերը, ձևավորվում գետային հոսքը, գրունտային ջրերն ու սառցադաշտերը, որոնք, քայքայելով երկրակեղևը, տեղափոխում ու նստեցնում են քայքայման արդյունքները ջրային ավազաններում և ցամաքային ռելիեֆի ցածրադիր մասերում: Արտաքին պրոցեսների մեջ անընդհատ աճում է մարդու դերը, որը պայմանավորված է շրջապատող բնությունն իր նպատակին հարմարեցնելու նրա ամենօրյա գործունեությամբ: